

Մալարիայի համաճարակաբանական իրավիճակը Հայաստանի Հանրապետության 4 շրջաններում

Գ.Ե. Գրիգորյան

ՀՀ ԱՆ Հիվանդությունների վերահսկման և կանխարգելման կենտրոն ՓԲԸ

ք. Երևան, Դավիթ Մալյան 37

Բանալի բառեր. մալարիա, էնդեմիկ և ոչ էնդեմիկ շրջաններ, փոխանցման սեզոն, հարուցիչներ, մալարիային մոծակներ, միջատասպան նյութեր

Մալարիան որպես մակաբուծային հիվանդություն Հայաստանում պատմականորեն ունեցել է լայն տարածում, որի աշխարհագրական դիրքն ու կլիմայական պայմանները մշտապես մպաստավոր են եղել հիվանդության տարածման համար: Ըստ մալարիաին գործոնների համադրվածությունը բաժանվել է 6 կլիմայա-աշխարհագրական գոտիների՝ անապատակիսաանապատային, չոր լեռնատափաստանային, լեռնաանտառային, լեռնատափաստանային, Ալպիական և լեռնատունդային գոտիների [1]:

Հայաստանում 1963թ. մալարիան վերացվել է շնորհիվ գիտնականների և բժիշկների երկար տարիների համատեղ, հետևողական աշխատանքների: 1950թ. լայնածավալ արշավը վերացրեց մալարիան ԱՀՀ Եվրոպայի տարածաշրջանի գրեթե բոլոր երկրներում, սակայն 1996թ. Եվրոպայի տարածաշրջանում ստեղծվեց համաճարակաբանական լուրջ իրավիճակ: 1993թ. նախկին ԽՍՀՄ-ում, մալարիան վերացնելուց շուրջ 30 տարի անց, մալարիայի նոր դեպքեր արձանագրվեցին Ռուսաստանի Դաշնությունում և նոր անկախ պետություններում [2]: Այդ ժամանակից ի վեր, Հայաստանում քաղաքական, սոցիալ տնտեսական պայմանների փոփոխության հետևանքով արձանագրվեցին մալարիայի բերովի դեպքեր, որոնք հետագայում սկիզբ հանդիսացան տեղական դեպքերի առաջացման համար [3,4]:

Նյութն ու մեթոդները

Հետազոտությունները մպատակ են հետապնդել պարզել մալարիոզին գործոնների փոփոխությունները համադրվածության 4 շրջաններում (Արտաշատ, Էջմիածին, Աշտարակ, Գավառ):

Կլիմայական ցուցանիշների գնահատման համար տվյալները վերցվել են համադրվածության վերոհիշյալ շրջանների 4 օդերևութաբանական կայաններից,

պարզելու համար հնարավոր սպորոգոնիայի սկիզբն ու ավարտը:

Տեղի մասնագետների օգնությամբ կատարվել է յուրաքանչյուր շրջաններից 50-ական գորագրվածների հարցում, նրանց մոտ մալարիայով բարձր հիվանդացության պատճառները պարզաբանելու համար:


Մալարիայի նկատմամբ առողջ մակաբուծակիրներին հայտնաբերելու և անցկացված քիմիական-խարգելիչ միջոցառումների արդյունավետությունը գնահատելու մպատակով, վերոհիշյալ շրջաններից 100-ական բնակիչների արյան պատրաստվածքը մինչև մալարիայի փոխանցման սեզոնի սկիզբը և սեզոնի ընթացքում հետազոտվել են Ռումանովսկի-Գիմզայի մեթոդով:

Արդյունքները և դրանց քննարկումը

Հետազոտությունների արդյունքները վկայում են, որ մալարիայի դեպքերի գերակշռող մեծամասնությունը արձանագրվել է մալարիայի էնդեմիկ շրջաններից գորագրվածների մոտ: Պարզվել է, որ նրանցից 3-ը Էջմիածնից, 1-ը Գավառից և 1-ը Արտաշատից հիվանդացել են մալարիայով գորագրումից հետո, թերի քիմիական-խարգելիչ բուժման հետևանքով:

Մինչև մալարիայի փոխանցման սեզոնի սկսվելը հետազոտված բնակիչների արյան պատրաստուկներում մալարիայի հարուցիչներ չեն հայտնաբերվել, իսկ սեզոնի ընթացքում հետազոտվածների մոտ հայտնաբերվել են եռօրյա մալարիայի հարուցիչներ Էջմիածնից 5, Գավառից և Արտաշատից 1-ական հիվանդի մոտ: Առողջ մակաբուծակիրներ չեն հայտնաբերվել: Մալարիայի փոխանցման սեզոնում հիվանդացածների համաճարակաբանական անամնեզից պարզվեց, որ նրանցից և ոչ մեկը չէր տեսել քիմիական-խարգելիչ բուժում:

Մալարիայով հիվանդացությունը Հայաստանի Հանրապետությունում
1994-2001 թթ.



Մալարիայով հիվանդացածների գերակշռող տոկոսը կազմում են զորացրվածները Ադրբեջանի և Իրանի սահմանակից տարածքներից: Հիվանդացության իջեցումը սկսած 1999 թ.-ից պայմանավորված է ԱՀԿ աջակցությամբ, կազմակերպված հիմնական բնակիչների և մալարիայի էնդեմիկ շրջաններից զորացրվածների քիմիական խարգելիչ բուժմամբ և օջախների մշակմամբ, նրանց կողմից տրամադրված ինսեկտիցիդներով:

Արտաշատը, Էջմիածինը և Աշտարակը գտնվում են Արարատյան դաշտավայրում, որը մալարիայի տեսակետից էնդեմիկ է համարվում, այստեղ մալարիայի տեղական դեպքեր արձանագրվել են սկսած 1996 թ.-ից: Արարատյան դաշտավայրում փոխանցման սեզոնը սկսվում է մայիսի 30-ից մինչև հունիսի 5-ը և ավարտվում սեպտեմբերի 12-ից մինչև 22-ը ընկած ժամանակահատվածում: 2000 թ. մալարիայի փոխանցման սեզոնը սկսվել է հունիսի 6-ին և ավարտվել՝ սեպտեմբերի 4-ին, որի ընթացքում հնարավոր էր 7 վարակման ցիկլի իրականացում: 2001 թ. սեզոնը սկսվել է հունիսի 6-ից և ավարտվել է սեպտեմբերի 20-ին:

Աշտարակի շրջանը համարվում է էնդեմիկ շրջան,

սակայն տեղական դեպքեր չեն արձանագրվել, ինչը պայմանավորված է մալարիայի փոխանցողների քիչ քանակով և մալարիայի էնդեմիկ շրջաններից զորացրվածների նկատմամբ կանխարգելիչ միջոցառումների ճիշտ կազմակերպմամբ: Այս շրջանում, որտեղ փոխանցման սեզոնը տվորաբար տևում է հունիսի 28-ից մինչև սեպտեմբերի 8-ը, հնարավոր էր սպորոգոնիայի 6 ցիկլի առկայություն, իսկ 2000 թ. տևողությունը եղել է հունիսի 8-ից հոկտեմբերի 11-ը: Առաջին սպորոգոնիկ ցիկլը ավարտվել է 2001 թ. հունիսի 10-ին:

Գավառում, որը ոչ էնդեմիկ շրջան է, տեղական դեպքեր չեն արձանագրվել: Կլիմայական պայմանները խոչնդոտում են սպորոգոնիայի աճվարտին: 2000 թ. կլիմայական պայմանները եղել են ոչ տվորական, գրանցվել է արտակարգ բարձր ջերմաստիճան, որը թույլ կտար Լսպորոգոնիկ ցիկլի ավարտ: Երջանում մշտական ջրականգներ չկան, երբեմն անձրևներից և ոռոգման ջրերից առաջանում են ժամանակավոր ջրականգներ, սակայն նրանցում մալարիայի փոխանցողների թրթուրներ չեն հայտնաբերվել: Հետևաբար, Գավառը մալարիայի տեսակետից եղել և մնում է ոչ էնդեմիկ շրջան:

Աշտարակը մախալեռնային շրջան է, 2001 թ. նրա ջրային մակերեսը կազմել է 17.5 հա, մինչդեռ 1999թ. եղել է 24.6: Ջրային մակերեսի զգալի իջեցումը պայմանավորված է ժամանակավոր ջրականգների վերացմամբ ու հողատարածքների մշակումներով, ինչպես նաև ոռոգման ռեժիմի կարգավորմամբ: 2000թ. ջրային մակերեսը կազմել է 718 հա, որից 8.53 հա՝ Հովտաշենում, 619.3 հա Շահումյանում, մինչդեռ 2001թ. ջրային ռեզերվուարների մակերեսը նվազել է մինչև 300 հա՝ շնորհիվ հիդրոտեխնիկական

միջոցառումների և գյուղատնտեսական նպատակներով տարածքների օգտագործման:

Էջմիածնի շրջանում ջրային մակերեսը վերջին տաս տարիներին գրեթե նույն մակարդակին է՝ 36.8 հա:

Վերոհիշյալ շրջաններում մալարիայի փոխանցողների քանակի հայտնաբերման նպատակով կատարված էքստենսիվ հետազոտությունների արդյունքները բերված են թիվ 1-2 աղյուսակներում:

Աղյուսակ 1

Շինություններում հայտնաբերված Anopheles ցեղի մոծակների քանակը (%)

Շրջաններ	Հետազոտված շինություններ								
	բնակարաններ			գոմեր			ընդամենը		
	1990	2000	2001	1990	2000	2001	1990	2000	2001
Արտաշատ	7.0	9.5	39.6	43.8	86.2	83.5	19.8	28.8	38.6
Էջմիածին	2.9	0.00	3.0	40.2	100	59.3	17.3	16.5	16.6
Աշտարակ	1.4	23.0	2.4	33	46.9	42.1	10.5	25.1	8.5
Գավառ	—	—	—	—	—	—	—	—	—

Աշտարակի շրջանում հետազոտությունները կատարվել են Օշական, Ոսկեվազ և Ագարակ գյուղերում: Այդ գյուղերում շնորհիվ բնակիչների կողմից կատարած շինությունների մշակումների, մոծակների բնակեցման խտությունը նվազել է 2.4

անգամ: Զգալի չափով ցերեկանոցներում նրանց քանակը նվազել է՝ 2000թ. — 0.37-ի դիմաց 2001թ. — 0.05, այնինչ գոմերում մկատվում է փոխանցողների հանդիպման միջին ցուցանիշի աճ մինչև 2.5:

Աղյուսակ 2

Anopheles ցեղի մոծակների հանդիպման միջին ցուցանիշները

Շրջաններ	Հետազոտված շինություններ								
	բնակարաններ			գոմեր			ընդամենը		
	1990	2000	2001	1990	2000	2001	1990	2000	2001
Արտաշատ	0.21	0.51	0.94	5.48	48.64	28.97	0.45	9.74	4.76
Էջմիածին	0.03	0.00	0.08	0.65	34.62	19.26	0.44	4.86	3.66
Աշտարակ	0.06	0.37	0.05	1.02	2.00	4.39	0.40	0.76	0.74
Գավառ	—	—	0.0	—	—	0.0	—	—	0.0

Ինչպես 2000թ. այնպես էլ 2001թ., Էջմիածնի շրջանում Գրիգորեղով և Ջրառատ գյուղերի 40 շինություններում անցկացված հետազոտությունների փոխանցողներ չեն հայտնաբերել: Anopheles ցեղի մոծակների հանդիպման միջին ցուցանիշները նվազել են 1.3 անգամ, իսկ խտությունը՝ 2 անգամ:

Արտաշատի շրջանում հետազոտությունները անցկացվել են Հովտաշեն և Շահումյան գյուղերում: Այստեղ տարիներին մալարիայի դեպքեր չգրանցվեցին: Այստեղում Հովտաշենում շինությունների շակումներ չեն կատարվել, սակայն շրջանի որոշ գյուղերում կազմակերպված միջոցառումները ազդել են ամբողջ շրջանում մալարիայի փոխանցողների քանակի նվազմանը՝ 2000թ. 9,74-ի դիմաց մալարիային մոծակի հանդիպման ցուցանիշը 2001թ. դրվագել է 4,76: Շահումյան գյուղում մալարիային մոծակների նվազեցումը 5.5 անգամ, պայմանավորված է ջրային մակերեսների կրկնակի կրճատումով, որը բերել է բնակարաններում նրանց հանդիպման ցուցանիշի նվազեցման:

Աշտարակի շրջանի Օշական, Ոսկեվազ և Լգարակ գյուղերում մոծակների քանակը նվազել է, սակայն բնակարաններում նրանք ավելի հաճախ են հանդիպում, որը տեղիք է տալիս մտածելու Anopheles sacharovi-ի ենթատեսակի քանակի հնարավոր աճի մասին:

Ամփոփելով կարող ենք ասել, որ մալարիայով հիվանդացությունը, մասնավորապես Էնդեմիկ շրջաններում, նվազել է: Հանրապետությունում մալարիայի իրավիճակը բարելավվել է՝ շնորհիվ ԱՀԿ ֆինանսական աջակցության և ՀՀ Կառավարության, առողջապահության, Գյուղատնտեսության, ՆԳ և Պաշտպանության նախարարությունների համատեղ ջանքերի: Կազմակերպված պայքարի և կանխարգելման, ինչպես նաև հիդրոտեխնիկական միջոցառումների արդյունքում նկատվում է նաև մալարիային մոծակների քանակի կայուն իջեցում: Չնայած մալարիայով հիվանդացության նվազմանը, արձանագրվում է հիվանդացության աշխարհագրական տարածման միտում:

Հանրապետությունում մալարիայով հիվանդացության կայուն իջեցումը և հետազայում վերացումը ապահովելու համար անհրաժեշտ է շարունակել հետևյալ միջոցառումները.

- հիվանդների վաղ հայտնաբերում և բուժում,
- պայքար փոխանցողի դեմ,
- մոռ օջախներում հիվանդների ակտիվ հայտնաբերում,
- մասնագետների պատրաստում և վերապատրաստում:

Поступила 02.04.02

Эпидемиологическая ситуация по малярии в четырех районах Армении

Г. Е. Григорян

Анализ заболеваемости малярией в республике свидетельствует о снижении уровня заболеваемости при наличии тенденции к географическому распространению случаев заболевания.

В Араратском и Армавирском районах при высокой маляриогенности территорий отмечается высокий уровень заболеваемости, тогда как в Аштаракском районе, при сравнительно высокой численности переносчиков, заболеваемость остается на низком уровне.

Изменения климата в Гаварском районе, выражаю-

щиеся повышением температуры, позволяют завершиться одному циклу спорогонии, что диктует необходимость систематического наблюдения за дальнейшими климатическими изменениями и возможным появлением переносчика.

Epidemiological situation of malaria in four regions of Armenia

G. Ye. Grigoryan

We have revealed that the number of malaria cases has decreased particularly in malariogenic regions. However, with the decrease in the total number of cases a geographic expansion of the disease was observed. Owing to proper management of malaria control, as well as of immense hydrotechnical measures, the number of malaria mosquitoes has drastically declined.

Consequently regular observations of further climatic changes and possible occurrence of vectors should be necessarily be conducted in malariogenic regions of Armenia.

Գրականություն

1. Дехиунян К.М. Эпидемиологическая география важнейших трансмиссивных заболеваний в Армянской ССР. М., 1975.
2. Кешишян А., Манукян Д. В. К вопросу о прогнозировании маляриологической ситуации в Армении. Тез. докл. юбилейной научной конф., посвященной 35-летию ЕрГИУВ НИЗ РА. Ереван, 1998, с. 24.
3. Кешишян А., Манукян Д.В., Алексанян Ю. Т. Некоторые аспекты маляриологической ситуации в Армении. Тез. док. Республиканской науч. конф. по зоологии. Ереван, 2001, с. 63.
4. Kuznetsow R. L., Kondrashin A. W. Strategy to roll back malaria in the WHO region. DK-2100, Copenhagen 1999.